# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք, ԼՈՌՈՒ
ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 ,
bazum.lori@mta.gov.am

N 016/45
*16 փետրվար 2018թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 11-Ա և12-Ա որոշումները:

Առդիր 2 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 11-Ա

### 06-023-0001-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Լոռու մարզի Բազում համայնքի 06-023-0001-0003 ծածկագրի տնամերձ հողամասին և նրանում առկա շինությանը տրամադրել գ. Բազում 1 փողոց թիվ 45 փոստային հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 12-Ա

## ՆՈՐԱՅՐ ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 06-023-0234-0008 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.00712 ՀԱ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ 35.57 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 18 մայիսի 2006 թվականի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> N 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, քանի որ կառույցը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1.Ճանաչել Բազում համայնքի սեփականության իրավունքը Նորայր Սիրեկանյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0234-0008 ծածկագրով 0.00712 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 35.57 քմ ներքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Օրինականացնել Բազում համայնքի սեփականությունը ճանաչված այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող , Նորայր Սիրեկանյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0234-0008 ծածկագրով 0.00712 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 35.37 քմ ներքին մակերեսով ավտոտնակ:

3. 06-023-0234-0008 ծածկագրով 0.00712 հա հողամասին և նույն հողամասում 35.57 քմ ներքին մակերեսով ավտոտնակին տրամադրել Բազում համայնք 9 փողոց թիվ 18 փոստային հասցեն:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի Կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

5.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի Կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում 06 023-0234-0008 ծածկագրով 0.00712 հա հողամասը և նույն հողամասում 35.57 քմ ներքին մակերեսով ավտոտնակը ՀՀ Լոռու մարզի Բազում համայնքի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**